# ՏԱՂԱՆԴԱՇԱՏ ՀԱՅԱԳԵՏ ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Հայագիտության մեջ եղել են և կան դեմքեր, որոնց բնութագրում են «անխոնջ մշակ» պատկերավոր արտահայտությամբ: Մեր օրերի հենց այդպիսի «մշակ» էր Էդուարդ Դանիելյանը, որի հետաքրքրությունների շրջանակն այնքան լայն էր, որ նույնիսկ դժվար է ասել, թե հայոց պատմության հատկապես ո՞ր շրջանն էր նրան առավել հարազատ:*

*Ծնվել է 1944 թ. փետրվարի 18-ին Երևանում: 1961-1966 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում, 1966-1972 թթ.՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում, որտեղ սովորում է անգլերեն: Սերը լեզուների հանդեպ հետագայում ևս չի մարում, և տարիների ընթացքում Է. Դանիելյանը հաղթահարում է նաև հին հունարենը, լատիներենը, ֆրանսերենը, որոնք հույժ կարևոր են լինելու նրա գիտական հետազոտությունների համար:*

*1968 թ. ընդունվում է Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտում է 1971-ին, իսկ հաջորդ տարի՝ 1972-ին, պաշտպանում թեկնածուական ատենախոսություն՝ «Անտիկ տիեզերագիտական հայացքների արտացոլումն Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն»-ում և «Աշխարհացոյց»-ում» թեմայով: Ժամանակի ընթացքում հետաքրքրությունների հորիզոնը առավել ընդլայնվում է՝ ներառելով հայ ժողովրդի պատմության նորանոր հարցեր, որոնք գիտնականը խորազնին քննության է ենթարկում դոկտորական ատենախոսությունում՝ «Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի մայրամուտին և Արաբական խալիֆայության սկզբնական շրջանում» թեմայով (պաշտպանել է 1988-ին):*

*Ընտրելով պատմագիտության բնագավառը՝ Է. Դանիելյանն աշխատում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ լաբորանտ (1968 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր), այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող (1971-1978), ավագ գիտաշխատող (1978-1989), գիտական խմբի ղեկավար (1989-2000): Մինչև 2010 թ. նա առաջատար գիտաշխատող էր, հետո՝ գլխավոր գիտաշխատող: 2010 թ. մինչև իր երկրային կյանքի ավարտը ղեկավարել է հարազատ ինստիտուտի «Հին դարերի պատմության» բաժինը: 2015-ից "Fundamental Armenology" («Հիմնարար հայագիտություն») անգլերեն լեզվով էլեկտրոնային հանդեսի գլխավոր խմբագիրն էր, որի էջերում լույս են տեսնում հա-*

յագիտության ամենատարբեր խնդիրներին նվիրված հոդվածներ՝ հագեցած տեսանյութերով ու շարժապատկերներով:

Է. Դանիելյանի հետազոտությունների հիմնական բնագավառը հայոց հին և միջնադարյան պատմության հիմնահարցերն էին՝ կապված Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի տեղաբնիկության, ավելի քան հինգհազարամյա հայկական պետականության, պատմական աշխարհագրության ու տիեզերաբանական պատկերացումների, քրիստոնեության լուսապաշտական ակունքների և Հայ Առաքելական Եկեղեցու վաղ շրջանի պատմության, հայ-իրանական ու հայ-բյուզանդական հարաբերությունների, հայոց քաղաքակրթական արժեքների, տարաբնույթ այլ խնդիրների հետ, և այս ամենը՝ համաշխարհային պատմության համապատկերում: Հիշատակենք մի քանիսը. “Армянские космографические труды VII века о строении Вселенной” (Е., 1978, 120 с.), «Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները» (առաջին հրատ., Ե., 1996, երկրորդ հրատ., Ե., 1997, 88 էջ), «Գանձասարի վանքը» (Ե., 2009, 227 էջ), “Գանձասարի պատմություն”, Ե., 2005, 458 էջ) մենագրությունները, որոնցից վերջինը հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և գունազարդ լուսանկարներով շքեղ հրատարակություն է:

Իր ավելի քան 200 աշխատություններում տաղանդաշատ գիտնականը անդրադարձել է բազում այլ հարցերի ևս՝ սկսած բնախոսությունից ու երկնային երևույթներից մինչև աստվածային ընկալումներ, Մետաքսի ճանապարհից մինչև Բագրատունիներ, Մեծ եղեռնից մինչև Արցախյան հերոսամարտ, ժողովրդագրությունից մինչև հայրենիք-պետություն-եկեղեցի եռամիասնություն: Այս և այլ թեմաներով հոդվածներից մասնավորապես նշելի են՝ «Отражение космографических воззрений античной науки в древнеармянских источниках» (ВДИ, 1973 № 4,), «Բագրատունիների հաստատումը Տարոնում և Արշարունիքում» (Պատմաբա-նասիրական հանդես, 1992, № 1, էջ 116-124), “The Historical Background to the Armenian State Political Doctrine – Armenian Perspectives” (Curzon, U.K. 1997, p. 279-286), «Մեծ եղեռն՝ սև էջ Հայոց պատմության մեջ» (Էջմիածին, 2000, Դ, էջ 36-44), «Հայրենիք-պետություն-եկեղեցի եռամիասնությունը» (Հայկական բանակ, 2001, - 1-2, էջ 34-43), “The Fundamental Questions of Armenian History in the Light of Tendencies of Modern Democracy. Armenian Philosophical Academy” (Armenian Mind, vol. V, 1-2, 2001, p. 7-17), «Աստված անունը վաղմիջնադարյան հայ քրիստոսաբանական մտքի մեկնությամբ» (Էջմիածին, 2001, Զ-Է, էջ 88-96), “Les conséquences politiques de la position stratégique de l'Arménie dans l'économie du monde ancien et médiéval” [Armeniaca (Publications de l'Universite de Provence, 2004, p. 203-227)], «Армения: цивилизационный вектор в истории развития Шелкового пути» (21-й век, 2013, № 3, с. 85-103):

Նրա ուշադրության կիզակետում էր նաև հայ ժողովրդի հոգևոր-մշակութային պատմության քարտեզագրումը, ինչի շնորհիվ կազմել է բազմաթիվ քարտեզներ, որոնք հրատարակվել են կամ առանձին, կամ տեղ գտել իր տարբեր աշխատություններում: Դրանցից են «Հայաստանն առաքելական քարոզչության ժամանակաշրջանում» (Ե., 1995), «Աստուծոյ դրախտ,

*Նոյի տապան, Մեղան Աստուծոյ, Հավիտենական Ուխտի երկիր Արարատայ լերինք» (Ե., 1996), «Հայաստանը Սբ. Գրիգոր Լուսավորչի առաքելության ժամանակաշրջանում» (Ե., 1997) քարտեզները:*

*Է. Դանիելյանն իր ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձել է անցյալի մեծերին՝ լուսաբանելով նրանց կյանքի ու գործունեության տարբեր կողմերը: Հնուց և միջնադարից՝ Արիստոտել, Պտղոմեոս, Արտաշես Ա, Տիգրան Մեծ, Տրդատ Գ, Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշ-տոց, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Դավիթ Անհաղթ, Վարդա-նանք, Մխիթարյաններ, նոր և արդի ժամանակներից՝ Նիկողայոս Ադոնց, Գարեգին Նժդեհ, Հովսեփ Օրբելի, Վիկտոր Համբարձումյան, Սուրեն Երեմյան և այլք՝ ահա այն պատմական անձինք ու նշանավոր դեմքերը, առանց որոնց լիակատար չէր լինի Է. Դանիելյանի գիտական նախասիրությունների պատկերը: Սրանց լրացնելու են գալիս այն ժամանակակից հայագետները, որոնց աշխատությունների վերաբերյալ գրախոսականներ է գրել՝ Գալուստ Գալոյան, Նիկոլայ Հովհաննիսյան, Պարույր Մուրադյան, Ռուբեն Սաֆրաստյան, Արամ Թոփչյան և ուրիշներ: Դանիելյան պատմաբանի համար առանցքային դեր ուներ Պատմահայր Խորենացու կերպարը, որը նրա ուղեցույցն էր, իսկ հայոց պատմության խորենացիական իմաստավորումը համարում էր ազգային անվտանգության գործոններից մեկը [“Խորենացիագիտական ներդրում հայագիտության անվտանգության ասպարեզում” (Գլոբուս Ազգային անվտանգություն վերլուծական տեղեկագիր, 2009, - 2(6), էջ 75-79)]: 2004-ից լինելով Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ՝ նա հեղինակել է “History and Metahistory in the Context of Metatheory” (Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, № 1), «Ազատության հոգևոր և բնափիլիսոփայական ընկալումը Գարեգին Նժդեհի խորհրդածություններում» ([http://www.noravank.am/arm/-articles/detail.php?ELEMENT_ID=7135](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7135)), «Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայեցակարգը և հոգևոր աշխարհայացքը» (Դար 21, 2014, № 6) և այլ աշխատություններ:*

*Է. Դանիելյանը հին և վաղմիջնադարյան շրջանների մասնագետ էր և խիստ պատվախնդիր էր մեր ժողովրդի երկար ու ձիգ պատմությունը և մշակույթը հավուր պատշաճի լուսաբանելու հարցում, մանավանդ, եթե արտահայտվել էր կարծիք, որը կարող էր խաթարել խնդրի ճշմարտացի ներկայացումը: Վերջին ժամանակներս նրան հատկապես հուզում էին թուրք-ադրբեջանական կեղծարարությունները և հայոց պատմության խեղաթյուրումները, որոնց դեմ իր անզիջում պայքարն էր մղում՝ հանուն հայագիտության անվտանգության: Անվանի գիտնականը բազմաթիվ նյութեր է հրատարակել տեղեկատվական պատերազմի, մասնավորապես՝ թուրք և ադրբեջանցի հետազոտողների կողմից հայոց պատմության հարցերի նենգափոխումների վերաբերյալ, հիմնականում անգլերենով, որպեսզի բարձրացված խնդիրները արտերկրի ընթերցողին նույնպես հասու լինեն: Դրանցից են, օրինակ՝ հայկական տեղանունների վերաբերյալ “Turkish-Azerbaijani falsifications of the Armenian toponyms as an indication of the genocidal policy” հոդվածը «Բանբեր հայագիտության» հանդեսում (2013,*

*№ 1), տեղեկատվական պատերազմում հայոց քաղաքակրթական գործոնի մասին "Армянский цивилизационный фактор в информационной войне" հոդվածը "21-й век" հանդեսում (2012, № 1, էջ 123-131), Բրիտանական թանգարանում հայկական ցուցանմուշներին նվիրված՝ "Progressive British Figures' Appreciation of Armenia's Civilizational Significance Versus the Falsified "Ancient Turkey" Exhibit in the British Museum" մենագրությունը (Yerevan, 2013), հայոց քաղաքակրթական ժառանգության մասին "Armenian Civilizational Heritage Versus Turkish-Azerbaijani Falsification of History and Historical Geography" հոդվածը «Լրաբեր հասարակական գիտությունների» (2014, № 1) հանդեսում և այլն:*

*Հատկապես կարևոր է գիտնականի ներդրումը Հայ ժողովրդի պատմության հայերեն և ռուսերեն բազմահատորյակների ստեղծման ասպարեզում, որտեղ նա գլխավորում էր հին շրջանին վերաբերող նյութերի խմբագրական աշխատանքները՝ նաև հեղինակելով հին և վաղմիջնադարյան պատմության մի քանի բաժիններ: Մասնակցել է նաև հայոց պատմության և հայրենագիտության մի քանի դպրոցական ու բուհական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների կազմմանը, որոնցում նույնպես հանդես է եկել որպես խմբագիր և հեղինակ:*

*Է. Դանիելյանը բազմաթիվ հանրապետական (Երևան, Ստեփանակերտ, Տաթև) և միջազգային (Բեռլին, Բուդապեշտ, Թբիլիսի, Սպահան, Լոնդոն, Հռոդոս, Մոնպելիե, Մոսկվա, Նիժնի Նովգորոդ, Ստավրոպոլ, Փարիզ) գիտաժողովներում հանդես է եկել հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ զեկուցումներով և ներկայացրել հայագիտության իր տեսլականը: Նաև ինքն է կազմակերպել գիտաժողովներ՝ նվիրված Հայաստանին՝ որպես քաղաքակրթության բնօրրանի, Մետաքսի ճանապարհին Հայաստանի ունեցած պատմական դերին, հայագիտության մեջ օտարազգի հետազոտողների ավանդին և մի շարք այլ թեմաների: Այս գիտաժողովներին մասնակցել են ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի շատ ճանաչված մասնագետներ, նյութերը միշտ տպագրվել են՝ ենթարկվելով Է. Դանիելյանի բծախնդիր խմբագրմանը:*

*Գիտական գործունեությանը զուգընթաց Է. Դանիելյանը զբաղվել է մանկավարժական աշխատանքով՝ 1989-2006 թթ. վարել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարանի Երկրագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը: 2001 թ. Արևմտյան Միչիգանի համալսարանը նրան շնորհել է պրոֆեսորի կոչում: Ողջ դասախոսական աշխատանքի ընթացքում վայելում էր ուսանողների սերն ու հարգանքը, ոչ միայն գիտելիք էր հաղորդում նրանց, այլև արշավների տանում՝ նպատակ ունենալով երիտասարդներին ավելի մոտիկից ծանոթացնել հայրենի բնաշխարհին ու պատմամշակութային հուշարձաններին:*

*Տարաբնույթ հետաքրքրությունների մեջ դրսևորվում էր նաև նրա հակումը գիտության տարբեր բնագավառների նկատմամբ՝ աշխարհագրությունից ու տիեզերագիտությունից մինչև պատմագիտություն: Արվեստի ճյուղերը նույնքան հարազատ էին գիտնականի հոգուն, Կոմիտասի կամ*

*դասական երաժշտության հնչյունների ուղեկցությամբ աշխատելը ոգեշնչում էր նրան:*

*Արցախյան թեման առանձնապես հոգեհարազատ էր Է. Դանիելյանին: Նա սիրով էր մասնակցում Հայկական բանակի տարբեր զորամասերի համար կազմակերպվող դասախոսություններին, որոնցում հատուկ դերակատարություն ուներ Պատմության ինստիտուտը՝ հայ զինվորին զինելով հարազատ ժողովրդի պատմության մասին գիտելիքներով:*

*Է. Դանիելյանի գիտական վաստակն ու հասարակական գործունեությունը բարձր են գնահատվել պետության և կառավարության կողմից. ՀՀ պաշտպանության նախարարությունը նրան պարգևատրել է «Գարեգին Նժդեհ» մեդալով, ՀՀ կառավարությունը՝ վարչապետի մեդալով:*

*Էդուարդ Դանիելյանը կհիշվի նաև որպես լավ ընկեր, որի հետ կարելի էր կիսել ուրախություն և վիշտ:*

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Գ. Դ.
*Պատմական գիտությունների թեկնածու*

“Լրաբեր հասարակական գիտությունների” հանդեսի խմբագրությունը և խմբագրական խորհուրդը խորապես վշտացած են անվանի հայագետ Էդուարդ Դանիելյանի անժամանակ մահվան կապակցությամբ և իրենց անկեղծ ցավակցությունն են հայտնում նրա ընտանիքին, մերձավորներին և գործընկերներին: